ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ -09/09 ծածկագրով ԲԸԱՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կառավարական տուն 1, 20.09.2016թ.
մասնաշենք 4 ժամը 15.15

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիշյանը,
հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեհրաբյանը,
Ա. Գասպարյանը,
ԳՀ քարտուղար Հ. Օհնիկյան

Ընթացակարգի հանձնաժողովի նիստում արձանագրվեց.

ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ-09/09 ծածկագրով բանակցային ընթացակարգի թվով չորս չափաբաժիններում միակ մասնակից «Ակտուալ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող: Մասնակիցը հրավիրվել է բանակցությունների՝ գնային առաջարկները նվազեցնելու նպատակով:
Բանակցություններին ներկայացել էր Ընկերության տնօրեն Հ. Զիրոյանը: Բանակցությունների արդյունքում Մասնակիցը համաձայնեց նվազեցնել առաջարկված գները և սահմանել հետևյալ չափով.

1. 1-ին չափաբաժնում 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,
2. 2-րդ չափաբաժնում՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,
3. 3-րդ չափաբաժնում՝ 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,
4. 4-րդ չափաբաժնում՝ 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը:

Հանձնաժողովը որոշեց ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ-09/09 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի չորս չափաբաժիններին մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակցին՝ «Ակտուալ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիշյան
հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեհրաբյան
Ա. Գասպարյան
ԳՀ քարտուղար՝ Հ. Օհնիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ -09/09 ծածկագրով ԲԸԱՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան, Կառավարական տուն 1,
մասնաշենք 4

19.09.2016թ.
ժամը 11.00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիշյանը,
հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեհրաբյանը,
Ա. Գասպարյանը,
ԳՀ քարտուղար Հ. Օհնիկյան

Ընթացակարգի հանձնաժողովի նիստում արձանագրվեց.

ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ-09/09 ծածկագրով բանակցային ընթացակարգի թվով չորս չափաբաժիններին մասնակցության հայտ է ներկայացրել «Ակտուալ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ 1-ին չափաբաժնում 613000 (վեց հարյուր տասներեք հազար), 2-րդ չափաբաժնում՝ 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար), 3-րդ չափաբաժնում՝ 620000 (վեց հարյուր քսան հազար), 4-րդ չափաբաժնում 520000 (հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գնային առաջարկներով:
Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակիցը հայտը ներկայացրել է 16.09.2016թ.-ին՝ հայտերի ներկայացման համար հրավերով սահմանված ժամկետում:
2. Մասնակցի կողմից ներկայացրած ծրարը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
3. Մասնակցի կողմից ներկայացրած ծրարում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:
4. Հրավերով պահանջվող մասնակցի «Մասնակցության իրավունք» չափանիշը, ինչպես նաև «մասնագիտական փորձառություն», «տեխնիկական միջոցներ», «ֆինանսական միջոցներ» և «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները գնահատել բավարար:
5. Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնման առարկաների նախահաշվային գները (1-ին չափաբաժնում 600000 (վեց հարյուր հազար), 2-րդ չափաբաժնում՝ 300000 (երեք հարյուր հազար), 3-րդ չափաբաժնում՝ 600000 (վեց հարյուր հազար), 4-րդ չափաբաժնում՝ 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամը:

Հանձնաժողովը որոշեց ՏՎԿ-ԲԸԱՀԾՁԲ-09/09 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի չորս չափաբաժիններին մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակցին՝ «Ակտուալ Քոմփանի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հրավիրել բանակցությունների՝ գնային առաջարկները նվազեցնելու նպատակով:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Եղիշյան
հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մեհրաբյան
Ա. Գասպարյան
ԳՀ քարտուղար՝ Հ. Օհնիկյան